№ 26 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4. 1901 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4 № 26

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՉՈՐ ԱՐԾԱՐՈՒՆԻ

Կիրակի, փետրվարի 4-ին,

ԴԱՐԻԱ ՋԱՔԱՐԵԱՆ ՄԻՐՋՈՅԵԱՆԻ

մահվան տարելիցի օրը Մողնու ս. Գէորգ եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ ապա տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին։ Պատարագը կը սկսվի ժամի 11-ին, իսկ հոգեհանգիստը—12½-ին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Բարեգործական կօնցէրտ. Նամակ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դէվէտը ծուղակի մէջ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

—

Անցեալ կիրակի օրը պատահում եմ իմ մի հինաւուրց բարեկամին։ Նա ինձ ասաց, որ ես չափազանց մեծ նշանակութիւն եմ տալիս գաւառներում կատարվող ուրախութիւններին։ Երկար խօսեցինք այդ մասին։ Իմ բարեկամը, ի հարկէ, նկատի չունէր այն տեսակ ուրախութիւնները, որոնց գրգռողը չափիչն է եւ պանին։ Նա ասում էր, որ եթէ Ալէքսանդրօպոլում, Երեւանում, Ախալցխայում կան ուրախութիւններ, դրանք շատ մանր բաներ են, անցնումգնում են չուտ, մոռացվում են աւելի չուտ։

Ես անցեալ զրոյցի մէջ յայտնել էի, թէ ինչու եմ նշանակութիւն տալիս մեր լալկան գաւառների հաղուագէպ ժպիտներին։ Բայց ուներէի եւ մի այլ պատճառ, որը չտապեցի յայտնել բարեկամիս։

Վերցնենք Կաղզուանը։ Մի խեղճ, կորած գիւղաքաղաք։ Արել է այնքան մեծ բան. կռուել է, կուում է իր եկեղեցու չնութեան գործում։ Ցիշում էք, նոյն իսկ պօլսեցիներն էլ, որոնք մի ժամանակ—մի բարի եւ, երեւի, այլ եւս անդառնալի ժամանակ—զգեստաւորված քահանային իջեցնում էին սեղանից,—նոյն այդ պօլսեցիները, ասում եմ, նախանձեցին կաղզուանցիներին եւ իրանց բախտաւոր կը համարէին, եթէ կարողանային հետեւել կաղզուանցիների օրինակին։

Դրանից էլ մեծ փոքր, մեծ պատիւ։

Բայց, ընթերցող, մի կարծէք թէ հեշտ է գաւառներում ուրախանալը։ Իժան չէ նստում այդ ուրախութիւնը գաւառացիներին։ Կաղզուանում մարդիկ մի քիչ տաքացել էին, մի քիչ մարդկային կերպարանք էին ընդունել,—եւ ահա թափվում են հարուածներ հարուածների եռեւից։ «Շատ թանդ նստեց մեզ մի աղայի դէմ կուելը»—ահա ինչ են գրում Կաղզուանից։

Եւ իրաւ, ինչեր տեղի ունեցան։ Մի արքեպիսկոպոս թռաւ Կաղզուան՝ քննութիւն կատարելու։ Բայց հօ մենք գիտենք թէ ինչ է հայ հոգեւորականի քննութիւնը։ 1894-ին մի հոգեւորական (չեմ իմանում վարդապետ թէ եպիսկոպոս) նոյնպէս թռչում էր Շուշի քննութիւն կատարելու։ Բայց դեռ Նոր-Բայազէտի ամհամաններում, այսինքն Շուշուց երկուերեք օր հեռու մի տեղ, նա արդէն վճռել էր թէ ով է արդարը եւ ով է մեղաւորը։ Եւ այդ հոգեւորականը, գիտէք, եթէ ոչ ամենախելօքը, գոնէ շատ «օրիգինալն» էր համարվում հայաբնակ ամբողջ հայութեան մէջ։

Եթէ նա այդպէս էր, ինչ պիտի լինէր մի հասարակ արքեպիսկոպոս, որ գնում էր Կաղզուանում արդարութիւն ցոյց տալու։ Նա իջաւ աղայի տանը, բռնեց աղայի կողմը, աղայի հակառակորդներին նախչեց կոպիտ խօսքերով, դեռ վեր կացաւ ու լրագրի մէջ էլ ինքն իրան գովեց, որ այդպէս է արել եւ ոչ թէ ուրիշ կերպ։ Սա մի քաջագործութիւն։

Երկրորդն այն էր, որ տեղական քահանաներից ամաչում եմ, երեւակայելով հօլանդացու փախուստը կուի դաշտից։

Բըսսս,—պըրրր... թրախկ։ Իմ ձին չեչտակի բարձրացաւ յետին ոտքերի վրա եւ արձակեց այնպիսի մի ձայն, որպիսին արձակում են կենդանիները մահվան վտանգի բոպէին։ Անպիտան ռուսը կայծակի շեչտով թաղվեց ձիուն բոլորովին մօտիկ աւազի մէջ, եւ եթէ միմիայն կէս մէտր այս կամ այն կողմը ընկնէր՝ զարնվելով ժայռին, այն աշխարհը կուղարկէր թէ ինձ եւ թէ ձիուս։

— Ձեր բախտը բանում է, հնչեց շատ մօտից նոյն պարզ ձայնը։—Ահա դուք էլ ստացաք մեր բարեկամների սրտագին ողջոյնը։ Այդ պատճառով միացէք ինձ հետ։

Այդ րոպէին առաջին անգամ ես ուշի ուշով դիտեցի այդ մարդուն։ Նրա արտաքինի վրա չէր նկատելի ձեւականութեան ոչ մի հետք։ Ալէխան մազերով եւ աւելի ալէխան միրուքով ու կապուտակ աղջկային աչքերով մի պարզ ծերունի զինուորական, որի երեսը ակօսված էր հարիւրաւոր կնճիռներով։ Նրա դէմքի արտայայտութիւնը փոփոխվում էր անընդհատ արագութեամբ։ Այսպէս էր բօքսերների զօրապետը—Դէվէտ։ Նրա նախահայրերը Հաարլէմից էին ծագում, կակաչների քաղաքից,—գոնէ այսպէս էր պատմված մի գրքում, որը ես յետոյ կարդացի հիւանդանոցում։

Ալէխան ծերունին առանց մէկի օգնութեան ցատկեց ձիու վրա, ձեռքով նշան տուեց եւ զօրքը, որ բաղկացած էր երկու հազարից ոչ աւելի հետեւակներից, հեծեալներից, Կրուպի չորս թնդանօթներից, բեռնակիր կենդանիներից եւ սայլերից, շարժվեց։

Դէվէտը արդէն բլրի ծայրին էր, իսկ ես, համաձայն նրա հրամանի, նրա կողքին կանգնած։ Իջնելով բլրի ստորոտը, նա, ձիու գլուխը դարձնելով, մի պտոյտ արեց եւ նորից վեր բարձրացաւ։ Կիրճով գլորվում էին թշնամու ալիքանման շարժվող շարքերը։ Օդը անշարժ կանգնած էր, իսկ արեգակը այրում էր իր բոլոր տաքութեամբ։ Հորիզոնի վրա դանդաղ առաջ շարժվող անգլիական զօրքի երկար ու սեւին տուող առաջապահ շարքերը անընդհատ հետամուտ էին լինում բօէրների վերջապահ գնդին։ Եւ այդ շարքերը երեւացին նաեւ աջ ու ձախ կողմերից։ Եթէ անգլիացիներին աջողվեր շրջապատել նահանջող բօէրների թեւերը, մենք կընկնէինք մի այնպիսի ծուղակի մէջ, որից գօրս դալը այլ եւս անհնարին կը լինէր։ Դէվէտը, շատ լաւ հասկանալով վտանգը, շտապում էր։

—Բաւական է, եթէ աջողվի մեզ հասնել այն բլրին,—ասաց նա,—իսկ երբ գիշերը վրա հասնէ, մենք կանցնենք դէպի ձախ թեւի լեռները։—Այնտեղ մենք վտանգից ազատ կը լինենք, որովհետեւ անգլիացիները անկարող են այսպիսի տեղերով հալածել մեզ։ Այժմ մեզ հարկաւոր է վաստակել էլի մի քանի ժամ։ Առ այժմ մենք առաջ չենք ձգի թնդանօթները եւ կարաւանը։

Դէվէտը նորից ուղարկեց մի քանի վաշտեր վերջապահ գունդը ուժեղացնելու համար եւ շուտով հրացանաձգութեան ճրթճրթոցը ապացուցեց, որ նրանք եռանդով կատարում էին իրանց պաշտօնը։

Բօէրական գնդերը դանդաղ շարժվում էին առաջ։ Նրանց հրամանատարը սպասեց, մինչեւ կղերական ոգին է այդպէս անում։ Ո՛չ։ Դա սխալ է։

Թաւրիզի, Սալմաստի, Խոյի, Մակուի բնակիչներին չնորհվեց լայն ինքնավարութիւն. նրանք կարող են ժողովներ կազմել, պատգամաւորներ ընտրել, որոնք իրանց կողմից առաջնորդ կընտրեն։ Իսկ մեր իրաւունքները օրէցօր կրճատվում են, մեզ զօռով քշում են տէրտէրների փէչերի տակ։

Պարզ է, որ մենք սալմաստցիների եւ խոյեցիների չափ զարգացած, հասունացած չենք։

Այժմ միայն ինձ համար հասկանալի դարձաւ թէ ինչու մեր բոլոր բողոքները «ձայն բարբառոյ յանապատի» են մնում։ Հասկանալի է... Երեխաների հետ ուրիշ կերպ չեն վարվում։

Բայց հասկանալը բաւական չէ։ Ի՞նչ ենք անում չափահաս դառնալու համար։

Հաւաքվենք բոլորս, ով երեխաներ ենք, գնանք Սալմաստ կամ Խոյ, սովորենք այնտեղ թէ ինչ է հարկաւոր ինքնավարութեան արժանանալու համար։ Այդ բաւական չէ։ Խնդրենք թաւրիզցիներին, սալմաստցիներին, խոյեցիներին, նոյն իսկ մակուցիներին, որ մեզ չափահասութեան վկայական տան եւ միջնորդեն ուր հարկն է, որպէս զի մեզ էլ նայեն այն աչքով, ինչ աչքով նայել են նրանց...

Իսկ մինչեւ այդ—մեր հիացմունքները...

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Ո՞վ է յանցաւորը». բժ. Ա. Բուդուղեանցի. 82 եր. գ. 15 կոպ. Նոր-Նախիջեւան 1900.

Սա առաջին բրոշիւրը չէ, որ լոյս է ընծայում հանգուցեալ հեղինակը։ Մինչեւ հիմա նա հրատարակել է 11 փոքրիկ բրոշիւրներ եւ խոստանում է նորերը։ Պ. Բուդուղեանը մեր այն հաղուագիւտ բժիշկներից է, որոնց չէ շլացնում մեծ պրակտիկան եւ որոնք մի ներքին պահանջ են զգում հաղորդելու ժողովրդին մի մասնիկ իրանց ձեռք բերած գիտութիւնից ու հմտութիւնից։

Ես ասացի՝ ներքին պահանջ, եւ, յիրաւի միմիայն բարոյական պահանջն է, որ ստիպում է բժ. Բուդուղեանին գրել, որովհետեւ նա ոչ մի շահասիրական դրդում չէ կարող ունենալ, քանի որ այդ բրոշիւրների գին 5 կոպէկներն էլ նրա ձեռքը չեն հասնում։

Դէվէտը ծուղակի մէջ

Ս.կանատեսի պատմածից

(Ա. Վան-Խիսլեռի)

—

Համարեա ամեն ինչ կորած էր։ Շարքերից հանող լուրերը աւելի քան յուսահատական էին։ Մերոնք գլուխները կորցրել էին թշնամու բազմութիւնից։ Անգլիացիները հեղեղել էին մեր երկիրը։ Մերոնցից մի քանիսը վիրաւոր, արիւնաթաթախ քարշ գալով՝ մօտենում էին մեզ, յայտնելով, որ փրկութեան յոյս այլ եւս չը կայ։

Չը նայած այս բոլորին, ես ամբողջ խումբը մղում էի դէպի բօէրները։ Մենք հօլանդացիներս դէպի հարաւ ափրիկական մեր եղբայրակիցները տաժում ենք ցեղական զգացմունք... Ի՞նչ պիտի անէի։ Մի կողմից տրամադրված էի դէպի տմարդի վախկոտութիւն, իսկ միւս կողմից ուզում էի երեւալ սրտոտ եւ անվախ։

Եւ այսպէս՝ չը գիտէի ինչ անել։

Մի փոքր հեռու մարդիկ խմբվել էին, ըստ երեւոյթին, զինուորական խորհրդի։ Տեղի ունէր տաք վիճաբանութիւն։ Ցանկարծ ես լսեցի մի պարզ եւ մաքուր ձայն։

—Մենք սկսում ենք յետ նահանջել։ Մենք պիտի պատռենք շղթան եւ անցնենք։ Տմարդի է նա, ով կը ձգէ մեր արդար գործը։

Տմարդի... Այդպէս էլ արհամարհված կը լինեմ ես, եթէ ձգեմ իմ տեղը... մատնեցի ես։ Ցիւ, սատանան տանէ։ Ես մինչեւ անդամ ինքս ինձ-

Դէվէտը արդէն բլրի ծայրին էր, իսկ ես, համաձայն նրա հրամանի, նրա կողքին կանգնած։ Իջնելով բլրի ստորոտը, նա, ձիու գլուխը դարձնելով, մի պտոյտ արեց եւ նորից վեր բարձրացաւ։ Կիրճով գլորվում էին թշնամու ալիքանման շարժվող շարքերը։ Օդը անշարժ կանգնած էր, իսկ արեգակը այրում էր իր բոլոր տաքութեամբ։ Հորիզոնի վրա դանդաղ առաջ շարժվող անգլիական զօրքի երկար ու սեւին տուող առաջապահ շարքերը անընդհատ հետամուտ էին լինում բօէրների վերջապահ գնդին։ Եւ այդ շարքերը երեւացին նաեւ աջ ու ձախ կողմերից։ Եթէ անգլիացիներին աջողվեր շրջապատել նահանջող բօէրների թեւերը, մենք կընկնէինք մի այնպիսի ծուղակի մէջ, որից գօրս դալը այլ եւս անհնարին կը լինէր։ Դէվէտը, շատ լաւ հասկանալով վտանգը, շտապում էր։

—Բաւական է, եթէ աջողվի մեզ հասնել այն բլրին,—ասաց նա,—իսկ երբ գիշերը վրա հասնէ, մենք կանցնենք դէպի ձախ թեւի լեռները։—Այնտեղ մենք վտանգից ազատ կը լինենք, որովհետեւ անգլիացիները անկարող են այսպիսի տեղերով հալածել մեզ։ Այժմ մեզ հարկաւոր է վաստակել էլի մի քանի ժամ։ Առ այժմ մենք առաջ չենք ձգի թնդանօթները եւ կարաւանը։

Դէվէտը նորից ուղարկեց մի քանի վաշտեր վերջապահ գունդը ուժեղացնելու համար եւ շուտով հրացանաձգութեան ճրթճրթոցը ապացուցեց, որ նրանք եռանդով կատարում էին իրանց պաշտօնը։

Բօէրական գնդերը դանդաղ շարժվում էին առաջ։ Նրանց հրամանատարը սպասեց, մինչեւ որ վերջին սայլը անցաւ դժուարին վերելքը։ Ապա նա նորից ծխեց իր չիբուխը ու ուղղվեց դէպի ագարակների շարքը, որը գեղեցիկ կերպով ձգված էր լեռան փէչերի վրա։ Ագարակներից մէկը աչքի էր ընկնում միւսներից իր մեծութեամբ եւ գեղեցկութեամբ. նրա ճակատին գրված էր «Lustrast»—խաղաղ ապաստարան։ Լռութիւնը եւ անապատային խաղաղութիւնը թագաւորում էին այդտեղ. չէին երեւում ոչ մարդիկ, ոչ էլ կենդանիներ։ Աւերիչ պատերազմը քշել ոչնչացրել էր ամեն ինչ։ Պէտք է որ այդ տան մէջ ապրելիս լինէր մի մարդ, որը հեռու աշխարհային վայելչութիւններից իր երջանկութիւնը փնտռում լինէր իր օջախի մէջ, իր գերդաստանի շրջանում։ Շէմից ոչ հեռու նկատելի էր գեղեցիկ վառարանը, որի մէջ կարծէք դեռ պահպանվում էր տաքութիւնը։

Բօէրների զօրավարը անշարժ կանգնած էր շէմի մէջ։ Նա հանեց գլխարկը եւ սկսեց սաստիկ ծխել իր չիբուխը։ Դրսից լսելի էին հրացանաձգութեան որոտը եւ կարաւանի առաջնորդների միմեանց խրախուսող ձայները։ Հրացանների ճրթճրթոցը վերջապահ գնդի մէջ՝ գընալով դադարում էր, եւ միմիայն շարքերում երբեմն-երբեմն լսելի էին հատ-հատ պայթումներ։

Եւ միանգամից, առանց մթաշաղի, ինչպէս սովորաբար լինում է արեւադարձային գօտիում, վրա հասաւ գիշերը, իսկ անգլիացիները մթութեան մէջ այլ եւս անկարող էին առաջվայ ուշադրութեամբ հետամուտ լինել իրանց հակառակորդներին։

—Փառք Աստուծու,—բացականչեց Դէվէտ,—մէկ անդամ էլ աջողվեց մեզ նահանջել... Եթէ

Ցարգելի բժշկի չշափած խնդիրները շատ հետաքրքրական են։ Բաւական է առաջ բերել նրա մի քանի բրոշիւրների վերնագրերը. «Առաջին օգնութիւն մինչեւ բժշկի գալը», «Վարակիչ հիւանդութիւններ», «Ինչ է սիֆիլիսը», «Վեներական ախտեր» եւ այլն։

Նրա գրելու ձեւն էլ հանրամատչելի է։ Նա կանգ չէ առնում մանրամասնութիւնների վրա, չէ աշխատում, օրինակ, ճշտօրէն նկարագրել հիւանդութեան երեւոյթները, ինքնապաշտպանութեան ու բուժական միջոցները։ Այսպիսով նրա գրուածքը դպրոցական ձեռնարկի յատկութիւններ չունի, որը պիտի ուսումնասիրել եւ ոչ թէ կարդալ—անցնել։ Նրա գրքոյկների ընթերցումից յետոյ ընթերցողի մտքում մնում է ընդհանուր հասկացողութիւն չշափած նիւթի մասին։

Սա գրելու մի ձեւ է, որը ունի իր շատ լաւ կողմերը եւ ամենից առաջ այն, որ հեշտ ընթերցանելի է դարձնում գրածը եւ չէ պահանջում ընթերցողից առանձին նախապատրաստութիւն։

Սակայն այս վերջին տեսակէտից հեղինակի բրոշիւրները միատեսակ չեն ու մի եւ նոյն զարգացման տէր ընթերցողներ չունեն աչքի առաջ։ Կան այնպիսիները, որոնք թէ նիւթի լրջութեամբ, թէ շարադրութեան ձեւով, աւելի ինտելիգենտ դասակարգի համար են նշանակված։

Այս վերջին կատեգորիային է պատկանում «Ով է յանցաւորը»։

Սա յանցաւորի մարդաբանական էտիւդն է, հիմնված նորագոյն հոգեբանների ու մարդաբանների հետազօտութիւնների վրա, եւ մի բարեխիղճ ամփոփումն է յանցաւորի մասին գոյութիւն ունեցող թէօրիաների։ Հեղինակին աջողվել է լուսաբանել այս վերին աստիճանի կնճռված բարդ խնդիրը։

Ցարգելի բժիշկը իր բրոշիւրներով ապացուցել է ժողովրդականացնողի տաղանդ եւ, որ գլխաւորն է, անշահասէր վերաբերումն դէպի գործը։ Այսպիսի գործիչների թիւը դեռ եւս չափազանց քիչ է մեր մէջ, եւ մենք նրանց գնահատել դեռ չը գիտենք էլ։

Ամբողջ սրտից ցանկանում ենք բժշկապետ Բուդուղեանին աջողութիւն։

Մի խորհուրդ միայն—պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել լեզուի վրա, որը (գոնէ այս վերջին բրոշիւրի մէջ) դժուարամարս է, լի հնացած անհասկանալի բառերով ու դարբառ դարձուածքներով, որոնք սաստիկ մթնեցնում են ու տեղ-տեղ նոյն իսկ անհասկանալի դարձնում հեղինակի միտքը։

Բժշկ. Վ. Ա.

—

Նոր ստացված հրատարակութիւններ.—1) Խոզէ Էչէգարա. «Մարիանա», դրամ. թարգմ. Արսէն Կոստանդինեան. 248 եր. գ. 1 ր. Բազու 1900. 2) „Тексты и разысканія по армяно-грузинской филологіи“ II С. Петербургъ 1900 г. 3) Н. Марръ. „Агіографическіе матеріалы по грузинскимъ рукописямъ Ивера“. ч. вторая. „Житіе св. Варлаама Сирокавказского“. С. Петербургъ 1901. 4) Н. Марръ. „Армяно-сирійскія словарныя замѣтки. Къ вопросу о переводахъ съ армянскаго на арабскій языкъ“.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՆՑԵՐՏ

—

Ուրբաթ, փետրվարի 2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կայացաւ կոնցերտ յօգուտ երկրորդ էժանագին գրադարանի եւ նրա՝ Հաւլաբարի ճիւղի։ Մասնակցում էին տիկին Ի. Սպենդիարեան (մեցցո-սոպրանո), օր. օր. Ա. Տուլայեվա, Վ. Ամիրաջիբի (պիանո), պ.պ. Ընրիկո Բրօջի (բարիտոն), Ա. Դ. Բուշ (մեծ-ջութակ-չելլո), Ա. Ս. Զմշկեան (կարդալ), օր. Օ. Պ. Միխէեվա (պիանո-ակկոմպանիմենտո) եւ պ. Մ. Թ. Վասիլիեվ (ջութակ)։ Ծրագիրը երկու մասից էր, բաղկացած բազմակողմանի համարներից։

Կոնցէրտը բացեց վիոլոնչելիստ Բուշ, որը շատ գեղեցիկ կատարեց Պաքի գրած «Սպանական պարտ» պիէսը։ Նրա աղեղը (смычекъ) հաստատ է եւ թանձր ձայներին տալիս է առանձին զօրութիւն։ Տեխնիկան բաւական զարգացած է։ Ափսոս, որ չը կրկնեց։ Տ. Սպենդիարեան երգեց Գունոյի, Վեբերի, Բիզիի եւ Ա. Սպենդիարեանի հեղինակութիւններից։ Ցարգելի երգչուհին Պետերբուրգում եւ Սիմֆերօպոլում աջողութիւն է ունեցել կոնցէրտներում։ Թիֆլիսում մենք նրան լսում ենք առաջին անգամ. ցանկալի կը լիներ լսել նրան օպերայում, որի համար ինչպէս լսում ենք, արտիստուհին ունի հարուստ բէպերտուար. ձայնի դիապազօնը բաւական մեծ է եւ ունի լաւ չկօլա, նիւանսները կատարում է նրբօրէն։ Հաստատութիւնը կրկնել տուեց նրա երգածներից եւ մատուցեց ծաղկեայ փունջ։ Թիֆլիսին լաւ ծանօթ եւ այժմ էլ երաժշտական ուսումնարանի դասատու բարիտոն Ընրիկո Բրօջի շատ հիանալի երգեց բեչիտատիվ եւ արիոզո «Լաբօրի արքայ» օպերայից։ Բացի դրանից հասարակութեան խնդրանքով երգեց երկու ուրիշ փոքրիկ արիաներ էլ։ Օր. Տուլաեվա եւ օր. Ամիրաջիբի նուագեցին միասին երկու դաշնամուրի վրա Արենսկու «Սիլուէտներ» պիէսը։ Նրանք ստացան մի մի փունջ եւ նուագեցին երկրորդ անգամ։ Զը նայած որ միմեանց չէին տեսնում, շատ ճիշդ կատարեցին հարց ու պատասխան (reprises) կտորները։ Պ. Զմշկեան կարդաց «Աստղեր» ռոմանսերը, որը զօրեղ տպաւորութիւն գործեց։ Պ. Վասիլիեվ նուագեց ջութակի վրա յայտնի ջութակահար կոմպոզիտորներ Վենիավսկու եւ Սարասատէի գրուածքներից։ Նրան լսում էին հաճութեամբ։

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Անի, յունվարի 15-ին

Անիի վանահայրութեան պաշտօնը ինձ յանձնելուց մինչեւ անցեալ դեկտեմբերի սկիզբը, մի տարվայ ընթացքում, Անիի օգտին ստացված նուէրների քանակութիւնը, թէ դրամով եւ թէ իրեղէններով, հասնում է մօտ 400 ռուբլու։ Այս մասին սրբազան պարտք համարեցի հրապարակով շնորհակալութիւն յայտնել նուիրատու անձինքներին, գլխաւորապէս Կարսի եւ Ալէքսանդրօպոլի յաջորդներ Եղիշէ եւ Մատթէոս վարդապետներին, Ալէքսանդրօպոլի հայ հասարակութեան եւ Կարս քաղաքի բնակիչ Մահտեսի Սարիբէկ Թոսունեանցին եւ պ. Տիգրան Մկրտումեանցին եւ ի մասնաւորի Կարսի շրջանի Զոլի գիւղի բարեպաշտօն ժողովրդին։

Վանահայր Անիի՝
Միքայէլ վարդապետ Տէր-Մինասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսի կօնդակով Ատրպատականի առաջնորդ ընտրելու իրաւունք տրվում է ոչ միայն Թաւրիզ քաղաքի հիմնարկութիւններին, ինչպէս մենք հաղորդել էինք երէկ, այլ Ատրպատականի բոլոր գաւառներին, որոնք պէտք է ընտրեն երկ-երկու պատգամաւոր առաջնորդական ընտրութիւնների համար։

—

Ցիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր «Պէպօ» պիէսի երեսնամեակի առիթով պէտք է ներկայացվի Թիֆլիսի ժողովարանում Գ. Սունդուկեանցի այդ նշանաւոր գրուածքը։ Ներկայացման կը մասնակցեն Թիֆլիսում գտնվող հայ դերասանական խմբի անդամները։

—

Առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից Թուրքեստանում եւ Անդրկասպեան երկրում կը հիմնվեն գրագիտութեան շարժական ուսումնարաններ։

—

Մայրաքաղաքի ֆինանսական շրջաններում խօսակցութեան առանձին առարկայ է դարձել այժմ Ամերիկայից ստացված մի տեղեկութիւն, որով հաղորդված էր, թէ ամերիկեան ամենախոշոր մեսալուրգիական գործարաններից չորսը միացել են միմեանց հետ եւ կազմել մի հսկայական սինդիկատ մի միլիարդ դօլլար դրամագլխով։ Երկիւղ են կրում, որ այս նոր սինդիկատը, որի հաւասարը չը կայ ամբողջ աշխարհում, կը սկսէ իր գործունէութիւնը սաստիկ իջեցնելով գները եւրոպական շուկաներում։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հերթական հարց է դարձրած խոշոր աւաններն եւ գիւղերը քաղաքների վերածելու եւ նրանց քաղաքային պարզ ինքնավարութիւն տալու խնդիրը։

—

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, մտադրութիւն կայ մօտ ժամանակներում միօրական ժողովրդագրութիւն կատարել Մոսկվայում։ Ներքին գործերի մինիստրութեան վիճակագրական կոմիտեում արդէն տեսնված են եւ հաւանութիւն են ստացել այն թերթերի ձեւերը, որոնցով պէտք է կատարվի ժողովրդագրութիւնը։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարճ ժամանակից յետոյ պէտք է քննէ կանանց համար հաշուապահական կուրսեր բանալու նախագիծը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են գիւղատնտեսական կրթութեան վերաբերմամբ կազմած այն կանոնագրութեան նախագծի բովանդակութիւնը, որ մշակվում էր երկրագործութեան մինիստրութեան մէջ մի առանձին ժամանաժողովում՝ երկրագործութեան դեպարտամենտի դիրեկտոր Խոմեակովի նախագահութեամբ։ Այդ նախագծով ենթադրվում է առանձնապէս բազմացնել գիւղատնտեսական ատորին չորդասարանեան ուսումնարանների թիւը, որոնց նպատակը պէտք է լինի այնքան պատրաստութիւն տալ աշակերտներին, որ նրանք աւարտելուց յետոյ կարողանան ինքնուրոյնաբար կառավարել ոչ շատ բարդ տնտեսութիւններ։ Ապա մտադրութիւն կայ հիմնել I եւ II կարգի գիւղատնտեսական դպրոցներ եւ գործնական ուսումնարաններ՝ պատրաստելու գիւղատնտեսական զանազան ճիւղերի մէջ հմուտ բանուորներ—երկրագործներ, անասնապահներ, իւղագործներ, այգեպաններ եւ այլն։ Նախագծով ենթադրվում է կազմակերպել նաեւ կրեւոր տեղերում գիւղատնտեսական կուրսեր, ընթերցանութիւններ եւ զրոյցներ ազգաբնակութեան մէջ գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու համար։ Ի վերջոյ երկրագործութեան մինիստրին իրաւունք է տրվում թոյլ տալ ազգաբնակութեանը հիմնել տեղական ընկերութիւններ՝ գիւղատնտեսական ուսումնարաններ բանալու եւ ընդհանրապէս գիւղատնտեսութեան զարգացմանը աջակցելու նպատակով։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Յունվարի 23-ին, քաղաքիս ձմերային ակվարանոցի դահլիճում տեղի ունեցաւ մի ժողովրդական պարահանդէս յօգուտ Ախալցխայի հայ երկսեռ ուսումնարանների չքաւոր սաների։ Դահլիճը համարեա լիքն էր հանդիսականներով եւ պարերեկոյթը տեւեց մինչեւ գիշերվայ ժամ 4-ը։ Ինչպէս լսեցինք, տեղիս թատերասէրները պատրաստվում են այս բարեկենդանին, Ղեւոնդեանց տօնի օրը, մի ներկայացումն տալու յօգուտ քաղաքիս յանուն Պուշկինի նոր բացվելիք հիւանդանոցի»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այս օրերս Պետերբուրգ է եկել Բաթումի տէր Կոստէն, եւ, ինչպէս լսում ենք, գալու նպատակն այն է, որ յանուն Վեհափառ Կաթողիկոսի ուզում է դիմել Աբամելիք Լազարեանին, որ այժմ արտասահման է եւ շուտով դառնալու է, որ իրան թոյլ տայ եկեղեցիներ ձեւերը, որոնցով պէտք է կատարվի ժողովրդագրութիւնը։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարճ ժամանակից յետոյ պէտք է քննէ կանանց համար հաշուապահական կուրսեր բանալու նախագիծը։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են գիւղատնտեսական կրթութեան վերաբերմամբ կազմած այն կանոնագրութեան նախագծի բովանդակութիւնը, որ մշակվում էր երկրագործութեան մինիստրութեան մէջ մի առանձին ժամանաժողովում՝ երկրագործութեան դեպարտամենտի դիրեկտոր Խոմեակովի նախագահութեամբ։ Այդ նախագծով ենթադրվում է առանձնապէս բազմացնել գիւղատնտեսական ատորին չորդասարանեան ուսումնարանների թիւը, որոնց նպատակը պէտք է լինի այնքան պատրաստութիւն տալ աշակերտներին, որ նրանք աւարտելուց յետոյ կարողանան ինքնուրոյնաբար կառավարել ոչ շատ բարդ տնտեսութիւններ։ Ապա մտադրութիւն կայ հիմնել I եւ II կարգի գիւղատնտեսական դպրոցներ եւ գործնական ուսումնարաններ՝ պատրաստելու գիւղատնտեսական զանազան ճիւղերի մէջ հմուտ բանուորներ—երկրագործներ, անասնապահներ, իւղագործներ, այգեպաններ եւ այլն։ Նախագծով ենթադրվում է կազմակերպել նաեւ կրեւոր տեղերում գիւղատնտեսական կուրսեր, ընթերցանութիւններ եւ զրոյցներ ազգաբնակութեան մէջ գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու համար։ Ի վերջոյ երկրագործութեան մինիստրին իրաւունք է տրվում թոյլ տալ ազգաբնակութեանը հիմնել տեղական ընկերութիւններ՝ գիւղատնտեսական ուսումնարաններ բանալու եւ ընդհանրապէս գիւղատնտեսութեան զարգացմանը աջակցելու նպատակով։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Յունվարի 23-ին, քաղաքիս ձմերային ակվարանոցի դահլիճում տեղի ունեցաւ մի ժողովրդական պարահանդէս յօգուտ Ախալցխայի հայ երկսեռ ուսումնարանների չքաւոր սաների։ Դահլիճը համարեա լիքն էր հանդիսականներով եւ պարերեկոյթը տեւեց մինչեւ գիշերվայ ժամ 4-ը։ Ինչպէս լսեցինք, տեղիս թատերասէրները պատրաստվում են այս բարեկենդանին, Ղեւոնդեանց տօնի օրը, մի ներկայացումն տալու յօգուտ քաղաքիս յանուն Պուշկինի նոր բացվելիք հիւանդանոցի»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այս օրերս Պետերբուրգ է եկել Բաթումի տէր Կոստէն, եւ, ինչպէս լսում ենք, գալու նպատակն այն է, որ յանուն Վեհափառ Կաթողիկոսի ուզում է դիմել Աբամելիք Լազարեանին, որ այժմ արտասահման է եւ շուտով դառնալու է, որ իրան թոյլ տայ եկեղեցիներ

միայն մեր վզին չի նստիլ անգլիական հեծելազօրքը։ Բայց դրա դէմ ես կը գտնեմ այլ միջոց։ Հասէք վերջապահ գնդին—նա դարձաւ դէպի ինձ—եւ յայտնեցէք, որ հրացանաձգութիւնը անմիջապէս դադարի այնտեղ. առանց այն էլ շատ նեղվեցին, այժմ նոյն իսկ մէկ զոհը աննպատակ կը լինի։

Երբ ես հրամանը կատարելով վերադարձայ ագարակը, Դէվէտ նստած էր մի հատիկ լամպայի աղքատիկ լոյսով լուսաւորված սենեակում։ Սեղանը բացված էր եւ կարծէք Դէվէտ ամեն մի վայրկեան սպասում էր տանտիկնոջ եւ կայսառ թոռների երեւալուն։ Նա գունատ էր, ինչպէս դիակը, իսկ աջ ձեռքով բռնած ունէր ալէխառն միրուքը։

—Հը՞, ինչ է պատահել, գեներալ. ձեզ տանջում է ճանապարհների դժուարութիւնը, ցաւակցօրէն դիմեցի ես նրան։

—Է, դատարկ բան, մրթմրթաց նա։—Զանազան մտածմունքներ զբաղեցնում են ինձ։ Այսպէս յաճախ է պատահում արշաւանքի ժամանակ... Այժմ, կարծում եմ, մեզք չէ երկու ժամի չափ աչք փակել։ Նահանջը կատարվում է իր կարգով։

Եւ նա, առանց հանվելու, մեկնվեց վառարանին կից նստարանի վրա, իսկ ես, տեղաւորվելով շէմքի մօտ, շուտով այնպէս խոր քնեցի, որ անգլիական ոչ մի որոտ չէր կարող ինձ զարթեցնել։

Ցանկարծ ես զգացի մի ուժեղ հարուած։

—Գալլօ, աղաղակեց Դէվէտը, վո՞ր կաց։

—Այս բօպէին,—եւ ես ոտքի վրա էի։—Ի՞նչ է պատահել։

—Առանձին ոչինչ, պատասխանեց ծերունին. բայց անիծված անգլիացիները նստել են մեր վրա, եղնները լծվեցին եւ սայլը շարժվեց։

Բայց մեր ետեւում դրութիւնը չը լաւացաւ։ Մեզ հետամուտ եղողները շատ լաւ գիտէին, որ մեր բանը բուրդ է։ Հետեւակների խմբովին հրացանաձգութեան դեռ կարելի էր դիմանալ, բայց հեծելազօրքը վտանգ էր սպառնում մեզ։ Եւ եթէ անգլիացիները սիրտ անէին յարձակում գործելու, անշուշտ նրանց ձեռքը կանցնէին բօէրների թնդանօթները։ Բօէրական կրակը անկարող էր երկար դիմադրել նրանց։

—Քաջ եղէք, խրախուսում էր Դէվէտ բօէրներին,—մի ճիգ ես մինչեւ «Lustrust» ագարակը, մի կէս քիլոմէտր ես... մի մէտր, եւ այդ ժամանակ ես անգլիացիներին կառաջարկեմ մի խնդիր։

Վերջապէս ահա ագարակը։ Մահու չափ տանջված ծանր հեւում էին թէ մարդիկ եւ թէ կենդանիները։ Արդէն լսելի էին հետամուտ եղող անգլիացիների բարձրաձայն հրամանները։ Նրանց ձիերը նոյնպէս իզուր ոգնում էին դուրս գալ աւազից։ Ձիաւորների ջանքերը եւ հայհոյանքները անզօր էին արագացնել ձիերի շարժումը։

Ահա սարի գագաթին յայտնվեց նաեւ վերջին ռազմասայլը։

Դէվէտ նորից ծխեց չիբուխը։

—Այժմ հերթը մեզ հասաւ,—ասաց նա ինձ.—այժմ մենք մի փոքր կը լուսաւորենք պարոն անգլիացիներին։ Ցետագայ հրամանները կարձակեմ ինքս անձամբ.

Եւ նա սլացաւ դէպի «Lustrust» ագարակը։ Ես մնացի դուրսի ձիերի մօտ կանգնած, ամեն րոպէ սպասելով անգլիական լիդիտի գնդակներին...

Ցանկարծ իմ ետեւում լսվեց շրխկոց... ես նայեցի լուսամուտին։ Մեր ծերունի գեներալը լամպան խփեց յատակին եւ վառեց շաղ անցած ձէթը։ Կրակը լափեց տախտակէ յատակը, պատերը եւ առաստաղը. մի վայրկեանց՝ ամբողջ ագարակը բոցերի մէջ էր։

—Այսպէ՞ս, ինքնաբաւական կերպով բացականչեց ծերունին.—այժմ նստեցէք ձիերը եւ ապա յետ նայեցէք։

Սարսափելի տեսարան։ Մեզ անգլիացիներից անջատում էր մի բոցեղէն հեղեղ։

—Հրամանատար, անվճռողական կերպով դարձայ ես նրան։—Իսկապէս դուք ոչ մի իրաւունք չունէիք կրակին տալու ագարակը։ չէ՞ որ նա ուրիշի սեփականութիւն է...

—Դատարկ բան, երիտասարդ, մրթմրթաց նա։—Ի՞նչեր էք մտածում։ «Lustrust»-ը իմ սեփականութիւնն է. լսո՞ւմ էք, իմ տունը, իմ ծննդավայրը... Այստեղ ես ապրում էի իմ գերդաստանով... Բայց փողի եւ հողի աչքածակ անգլիացիները մեզ հալածեցին այստեղից։ Նրանք խորտակեցին իմ ընտանեկան բաղդաւորութիւնը. իսկ այժմ ես ինքս իմ ձեռքով ոչնչացնում եմ իմ մանկութեան օրանը... Այն ինչ որ պատահեց ինձ հետ, նոյնը պատահեց նաեւ դրացիներիս հետ... Չէ՞ որ այժմ մեզ համար մի եւ նոյն է թէ ազատութեան համար որտեղ կընկնենք։ Ապա նայեցէք...

Ես նայեցի։ Ագարակ ագարակի ետեւից իրանց բազմաթիւ փայտէ տնակներով՝ բոցավառվում էին։ Եւ այդ հրեղէն պատնէշը գրաւել անկարող եղան անգլիացիները։

Ցավ. Տէր Մարտիրոսեանց

Երեւան.

ղեցում ժողովարարութիւն անել. իսկ այլ հատատ աղբիւրներից լսում ենք, որ տէր Կոտէն ուզում է կամ Մոսկվայի կամ տեղիս եկեղեցում քահանայի պաշտօն ստանձնել։ Նայոյս ունի, որ տեղիս վաճառականների օգնութեամբ եւ իր բարեկամների միջնորդութեամբ կարող է այս գործը դլուխ բերել։ Բայց այս ամենը երազներ են. նախ որ երրորդ քահանայի կարիք չը կայ եւ եթէ լինի էլ, տէր Կոտէի անցեալը եւ թէ ներկան այնքան մութ գոյներով կարելի է նկարել, որ նրա ամենալաւ տեղը՝ Սեւանի կղզին է եւ ոչ թէ եկեղեցու սուրբ տեղանը։ Տէր Կոտէն կիրակի օրերը գալիս է եկեղեցի ու շուրջառը գցած դասում երգում է. այս բանը այնքան էլ դուր չէ գալիս տեղիս հոգեւորականներին, նախ՝ որ տէր Կոտէի աջող ձայնը ու երգեցողութիւնը նախանձ է շարժում եւ երկրորդ իրանց կաշին են վախում, քանի որ տեղիս հոգեւորականներն էլ չեն կարող պարծենալ իրանց արժանաւորութիւններով։»

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ահա 10 օր է, որ հրաշալի գարնանային եղանակներ են լինում մեզանում։ Մի քանի բաներ, ինչպէս, օրինակ, ձուն եւ իւղը էժանացան, որովհետեւ լաւ եղանակի պատճառով այժմ գիւղերից շատ մթերքներ են բերում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Temps» լրագրի Լօնդոնի թղթակիցը գրում է. «Խաղաղութեան գաղափարները հետզհետէ աւելի եւ աւելի մեծ շրջաններ են դրաւում։ Հաւատացնում են, թէ Էդուարդ VII թագաւորը եւ Վիլհելմ II երկարատեւ խորհրդակցութիւն ունեցան այն մասին, թէ ինչ միջոցներով կարելի է շուտով խաղաղութիւն կնքել։ Ասում են, թէ հնար մտածելով ուղղելու անգլիական քաղաքականութեան անաջողութիւնը հարաւային Աֆրիկայում, Վիլհելմ II եւ Էդուարդ VII կանգ առան Դէլագոա ծովախորշի վրա, որի ձեռք բերելը պէտք է ծառայէ Անգլիային իբրեւ փոխարինութիւն այդ անաջողութեան։ Տեղեկութիւնները բօէրների խուժման մասին դէպի պօրտուգալական տիրապետութիւնների սահմանները կարող էին ծառայել որպէս պատրուակ Անգլիայի համար դրաւելու Դէլագոան։ Ասում են նոյնպէս, որ այս բանակցութիւնները երկու միապետների մէջ այն գլխաւոր պատճառն էին, որ ստիպեցին պօրտուգալական թագաւորին երկար մնալ Անգլիայի մայրաքաղաքում։

—Անգլիական լրագիրներում յայտարարված է, որ բրիտանական թագաժառանգը իր ամուսնի հետ միասին առաջիկայ մարտ ամսի մէջին թերուած կուղեւորվի Աւստրալիա, ուր նա անձամբ բաց կանէ հանրապետական պարլամենտի առաջին նստաշրջանը։ Ծովային մինիստրութիւնը արդէն պատրաստում է մի քանի զինուորական նաւեր, որոնք պէտք է ուղեկցեն արքայական «Ophir» զբօսանաւին։

—Նշանաւոր հիգիէնիստ Պէտտէնկօֆէրի ինքնասպանութեան մասին «Рус. Вѣд.» լրագրի Բերլինի թղթակիցը հետեւեալ մանրամասնութիւններն է հեռագրում. «Պէտտէնկօֆէր ինքնասպանութիւն գործեց կիրակի առաւօտեան։ Նա գնդակը ուղղել էր աջ քունքին։ Ութսունեռքսանայ ծերունին վաղուց արդէն մահ էր ցանկանում։ Նրան վախեցնում էր ոչ կենսական ոյժերի նուազումը, այլ համոզմունքը, որ գիտակցութիւնը հետզհետէ թուլանում է։ Նա շատ անգամ ասում էր, թէ իրան սպասում է իր ազգականներից մէկի վիճակը, որ զառամեալ հասակում խելագարվեց եւ ստիպված եղաւ մտնել հիւանդանոց։ Այս տրամադրութիւնը չարունակ ճնշում էր նրան։ Հոգեկան հիւանդներին յատուկ հնարագիտութեամբ հանգուցեալը կարողացել էր խուսափել ազգականների հսկողութիւնից եւ ձեռք բերել ռէվոլվէր։ Բաւարական պրինց-խնամակալը ուղարկել է Պէտտէնկօֆէրի աղջկան մի պակ եւ նամակ, որի մէջ ցաւակցութիւն է յայտնում նրան այն անփոխարինելի կորուստի առիթով, որ ունեցան նրա ընտանիքն եւ գիտութիւնը։ Բերլինի գիտական աշխարհը ջերմագին ցաւակցութիւն է յայտնում։ Հասարակութիւնը զարմացած է։ Հանգուցեալ գիտնականը մեծ ժողովրդականութիւն էր վայելում։

—Փետրվարի 7-ին (ն. տ.) Մադրիդում կրկին տեղի ունեցան բուռն հակակղերական ցոյցեր, որոնց իբրեւ շարժառիթ ծառայել էր այն դատը, որ այժմ քննվում է Մադրիդում եւ որ շատ ընորոշ է եզուիտների բարքերի եւ սովորութիւնների տեսակէտից։ Մի աղջիկ՝ սպանական հարուստ եւ կրօնասէր ընտանիքից, դրդված իր եզուիտ խոստովանահօր քարոզներից, հակառակ ծնողների կամքի, փախչում է տանից եւ մտնում եզուիտների Esolavas վանքը։ Այս միջոցով եզուիտները կամենում էին տիրապետել հարուստ ժառանգուհու գրաժաղովները։ Աղջկայ ծնողները բողոքեցին եզուիտների այդ վարմունքի դէմ եւ պահանջեցին, որ աղջկան յանձնեն իրանց։ Բայց առաջին ինստանցիայի դատարանը, յենվելով այն հանգամանքի վրա, որ աղջիկը 24 տարեկան է, ճանաչեց նրա իրաւունքը վարվելու համաձայն իր ազատ կամքի։ Այն ժամանակ գործը յանձնվեց աւելի բարձր դատարանի, ուր եւ այժմ քննվում է։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Նորերս ես պատի ժամացոյց գնեցի։ Ժամագործը, առանց զանգակը ստուգելու, բերել կախել էր ժամացոյցը իմ սեղանատան պատից։

Շուտով սկսվեց կատակերգութիւնը։

Կէսօրին ժամացոյցի զանգակը խփեց ութ։ Դա ծիծաղ յարուցեց, բայց մի եւ նոյն ժամանակ բարկութիւն պատճառեց։

Նոր ժամացոյց գնենք եւ այն էլ սխալ։

Բայց շուտով հանդատացանք։ Մտածեցինք, որ դժուար չէ նրան ուղղել։ Անհրաժեշտ էր սլաքը առաջ տանել մի չորս ժամով եւ ահա ամեն բան կարգի կընկնէր։

Սակայն դուրս եկաւ, որ ութը խփելուց յետոյ ժամացոյցը խփեց ոչ թէ իննը, այլ երեք։ Մեքենան բոլորովին խանգարված էր։

Պէտք էր դիմել ժամագործին։

Երեկոյեան, թատրոն գնալուց առաջ, մտայ ժամագործի խանութը եւ յայտնեցի եղելութիւնը։ Խանութում հանդիպեցի իմ մի ծանօթին, որ, երբ լսեց իմ գանգատը ժամացոյցի մասին, բացականչեց՝

—Բա, դա դրուստ մեր ընկերութեան բանն է։ Այնտեղ էլ ամեն բան խառնըշտված է։

Պարոնը Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան անդամներից մէկն էր։

—Ձեր բանը հեշտ է, աւելացրեց ծանօթս, ժամագործը կը գայ, կուղղի ժամացոյցը եւ ամեն բան կարգին կը լինի։ Բայց մենք ինչ անենք։ Ի՞նչպէս ուղղենք մեր ընկերութեան գործերը։

Ժամագործի հետ խօսելիքս վերջացրի եւ դուրս եկայ ծանօթիս հետ։ Մինչեւ ներկայացման սկսվելը դեռ կէս ժամ ազատ ժամանակ ունէի։ Ծանօթս էլ ցանկութիւն յայտնեց թատրոն գնալու։ Այդ օրը տալիս էին «Տիկնիկ» օպերետը, որ ռուսերէն յայտնի է «Игрушка» անունով, իսկ ֆրանսերէն կոչվում է «La Poupée»։

Այդ օպերետը մեծ աջողութիւն ունի Թիֆլիսում եւ կարճ միջոցում ներկայացվել է քսան անգամ։ Ծանօթս ուրախ էր ներկայ դէպքին, որ կը տեսնի այդ ժողային օպերետը։

Վճռեցինք մինչեւ ներկայացման սկսվելը մտնել պրոսպեկտում։

—Այդ ինչ է կատարվում ձեր ընկերութեան մէջ, հարցրեցի ես։

—Յեղափոխութիւն, քաօս. ճիշդ այնպէս, ինչպէս Ֆրանսիայում հարիւր տարի առաջ, քմծիծաղով եւ հեռատրական չեչտով վրա բերեց իմ ծանօթը։

Նա պատմեց մի շարք կուրիօզներ ընկերութեան կեանքից։

—Վաղուց, ի հարկէ, աւելացրեց նա, քանդված կը լինէր այս ընկերութիւնը. բայց նրա վերցրած հողը լաւն է եւ նաւթը դուրս է գալիս առատութեամբ։ Դա է ընկերութեան երեսը պարզ անում։

Իսկապէս՝ ընկերութիւնը մի շատ ծիծաղելի եւ ողբերգական վիճակի մէջ է։ Չէ կարողանում ընդհանուր ժողովներ կազմել եւ նոր ընտրութիւններ անել։ Իսկ վարչութեան անդամների մէջ երկպառակութիւնը հասել է ծայրայեղութեան։

—Ձեր ընկերութեան անդամների մէջ շատ կան բանիմաց եւ խելացի մարդիկ, ասացի ես, ինչու՞ չէք խմբվում եւ գործում։

—Այդ ճիշդ է, բայց ջուռաբաջուռա մարդիկ շատ կան մէջները։

—Հետաքրքիր բառ է, նկատեցի ես, ջուռաբաջուռա։

Ներկայացումը պէտք է սկսվէր։ Մենք մտանք թատրոն։

—

Ի՞նչ համեմատութիւն կարող է լինել, ընթերցող, «Տիկնիկ» օպերետի եւ Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ։

—Ի հարկէ, ոչ մի համեմատութիւն, կասէք դուք։ Օպերետում թեթեւ եւ գրաւիչ երգեցողութիւն, զուարթ ծիծաղ, հետաքրքրական տեսարաններ, ուրախ տրամադրութիւն, գեղեցիկ արդուզարդ, փայլ ու գոյն։ Իսկ նաւթային ընկերութեան մէջ՝ ամեն տեսակ կրքեր, չարութիւն, կատաղի բողոքներ, հայհոյանքներ, մաղութ, կուպր, մուխ եւ մուր։ Ոչ մի համեմատութիւն։

Բայց երեւակայեցէք, որ կայ համեմատութեան մի խոշոր գիծ։

—Հետաքրքրական է։

Այդ օպերետի մէջ դուրս է բերված Իլարիուս անունով մի վարպետ, որ շինում է շատ լաւ խաղալիքներ եւ տիկնիկներ։ Այդ խաղալիքները եւ տիկնիկները անում են զանազան շարժումներ, արտասանում են ամբողջ նախադասութիւններ, երգում են զանազան եղանակներ... Ամեն մի գործողութեան համար խաղալիքները ունեն յատուկ կոճակներ կամ կնօպկաներ։ Մատներդ դրեցէք մի որոշ կոճակի վրա եւ ահա տիկնիկը երգեց։ Սեղմեցէք մի ուրիշ կոճակ՝ տիկնիկը կը պարի։ Երրորդ կոճակը խօսեցնում է, եւ այլն, եւ այլն։

Օպերետի մէջ կայ մի տեսարան, ուր մարդիկ սխալ են վերցնում եւ խառնում են կոճակները։ Դրանից առաջանում է խառնափնթորութիւն։

Օրինակ.

—Ի՞նչպէս է իմ անունը, տիկնիկ, հարցնում է վարպետ Իլարիուսը, սեղմելով կոճակը։

—Ապուշ, պատասխանում է տիկնիկը։

Վարպետը վրդովված է։ Նա սեղմում է ուրիշ կոճակ եւ նորից հարցնում։

—Իլարիուս, պատասխանում է տիկնիկը, ուղղելով իր սխալը։

Այնուհետեւ ամբողջ օպերետի ընթացքում շարունակվում է թիւրիմացութիւնների մի ամբողջ շարք, որոնց վրա եւ հիմնված է օպերետի հետաքրքրութեան մեծագոյն մասը։

Ահա այստեղից սկսվում է եւ իմ ակնարկած համեմատութիւնը։

Կոճակները, կնօպկաները խառնվել են Թիֆլիսի նաւթային ընկերութեան մէջ։

Ոչ ոք ոչ ոքի չէ հասկանում։ Առաջ է եկել բաբելոնեան մի խառնակութիւն, որից ոչ ոք գլուխ չէ հանում։

Միջարարին ես նորից տեսնվեցի իմ ծանօթի եւ մի քանի ուրիշ անձանց հետ։

Խօսք բացվեց այն նամակի մասին, որ տրված էր «Մշակի» մէջ հաշուապահ Ց. Ցակոբեանցի եւ վարչութեան անդամ Խ. Արզումանեանցի մասին։

—Այդ բոլորը ճիշդ է, բացականչեց մէկը։ Ցակոբեանը ունի իր ձեռքին փաստեր, որոնք ցոյց են տալիս թէ կեղծիքներ են կատարվել վարչութեան մէջ։

—Ճիշդ է, ճիշդ չէ, դա երկրորդական հարց է, նկատեց միւսը։ Ընդհարումը տեղի է ունեցել ոչ այդ փաստերի պատճառով, այլ այն պատճառով, որ հաշուապահին մեղադրել են «գաղտնիքներ» դուրս տանելու մէջ։ Հաշուապահը զայրացել է այդ մեղադրանքից։

—Ոչ, այդպէս չէ, դա միայն վերջին կաթիլն է եղել լցված բաժակի համար։ Փայերի վերաբերութեամբ մի շարք զեղծումներ են տեղի ունեցել։

—Ոչ, սխալ էք։

—Դուք էք սխալ։

Քիչ մնաց, որ թատրոնի ֆոյէում կրկնվի նորից երեւելի ընկերութեան նշանաւոր ժողովներից մէկի տեսարանը։

—Ներողութիւն, պարոններ, մէջ մտայ ես. այստեղ թողէք ձեր վիճաբանութիւնը։ Դա ամենեւին հետաքրքրական չէ։ Հաւատացէք, որ հետաքրքրական չէ։

—Ինչու՞, պատասխանեց մէկը, խորամանկ կերպով խուփ ու բաց անելով մի աչքը. այնտեղ գաղափարական մարդիկ կան, այնտեղ կան զանազան գրական կուսակցութիւններ, կան եւ մշակականներ։

Ի՞նչ, բարկացած բացականչեցի ես։ Այդ էր պակաս։ Ով ինչ անուն ու դրօշակ ուզում է այնտեղ խօթէ, բայց մշակական խօսքը այնտեղ երբէք չէ եղել եւ չի լինիլ։ Այդ լաւ հասկացէք եւ առ միշտ միտներդ պահեցէք։

Զանգը խփեցին։ Մենք մտանք թատրոնի դահլիճը։

—

Ես յետոյ լսեցի, որ արդարեւ գտնվել են անբարեխիղճ անձինք, որոնք յանդգնել են այդ ընկերութեան խառն գործերում մշակական անունով վարագուրել իրանց ըռնած դիրքը այս կամ այն անձի դէմ։

Այդ առիթով լսեցէք եւ մեր ասելիքը։

Ով դուք այժմեան հակառակորդներ, ընկերութեան գործերի համար միմեանց միս ուտողներ, դուք մոռացաք երեկվայ օրը, երբ դուք ձեզ շատ լաւ բարեկամներ էիք զգում միմեանց հետ եւ կուռ կռան գցած ոտի տակ էիք տալիս ամեն բան։

Այդ ինչ բարեկամութիւն էր եւ այժմ ինչ թշնամութիւն է։

Ի՞նչ է փոխվել աշխարհում։

Ի՞նչ բարի գործ էք կատարել դուք, որով պարծենայիք եւ գաղափարական դրօշակի պէտք ունենայիք։

Արդեօք ձեր փայերի մի քանիսը նուիրել էք բարեգործական որ եւ է հաստատութեան։

Արդեօք ձեր մշակների համար ծրագրել էք մի որ եւ է արտակարգ յարմարութիւն։

Արդեօք պաշտպան էք հանդիսացել ձեր խեղճ բաժնետէրերի խնայած կօպէկներին։

Արդեօք ձեր արդիւնքների մի մասը որոշել էք յատկացնել որ եւ է բարի նպատակի։

Արդեօք անբիծ կերպով էք տարել ձեր գործերը, որ օրինակելի լինէք ուրիշների համար։

Ոչ, ոչ եւ ոչ։

Ուրեմն, ինչու՞ համար է հարկաւոր եղել ձեզ դրօշակը։

Ձեզ հետաքրքրել է այն, թէ ով ամենից շատ փայեր ձեռքը կը գցի, թէ երբ նաւթի գինը լաւ կը բարձրանայ, որ անձնական շահը աւելացնի, թէ ով ամենից չաղ պատառը իր կողմը կը դրաւի։

Միայն եւ միմիայն։

Այդ ընկերութեան մէջ դուք եղել էք ամեն բան, բայց ոչ մշակական։ Դուք եղել էք նաւթապաշտական, «մուրթ-գործերս»-ական, աֆերիստական, միամտական, էշի-հրեշտակական, գայլաբանական, ոչխարական, գօն-կիխոտական...

Թիւրիմացութիւնը կատարեալ է։ Գայլերը հանդէս են եկել ոչխարներին պաշտպանելու։ Ոչխարները գլուխ են կոտրում գայլերին պաշտպանելու...

Կոճակները խառնվել են։

Բաբելոնեան կատարեալ խառնակութիւն է։

Մարդիկ գլուխները կորցրել են եւ միմեանց չեն հասկանում։

Վրթին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

2 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 1-ին Նիկոլայ II կայսրի անունով հիմնված ժողովրդական տունը Ալէքսանդրեան ծառաստանում՝ արժանացաւ Թագաւոր Կայսրի այցելութեան։—Տօբոլի նահանգապետ Կնեազեվին, Լօմժինեան նահանգապետի պաշտօնակատար բարոն Կորֆին եւ Վոլոգդայի նահանգապետ Լապպա-Ստարժենեչկին հրամայված է լինել առաջինին՝ Վոլոգդայի, երկրորդին Լօմժինեան եւ վերջինին՝ Տօբոլի նահանգապետ։ Վլադիմիրեան փոխ-նահանգապետ իշխան Ուրուսովին հրամայված է լինել Գրոդնոյի նահանգապետի պաշտօնակատար։—Ներքին գործերի մինիստրը որոշեց երեք ամսով դադարեցնել «Новости дня» լրագրի հրատարակութիւնը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Այստեղի կառավարութիւնը եւ իշխանութիւնները տեղեկութիւն ստացան, թէ Խրիստիան Դէվէտ եւ նախագահ Շտէյն ներս են խուժել Կապի գաղութը եւ գրաւել են Ֆիլիպատօնը։ Երէկ բրիտանական զօրքերը յարձակվեցին նրանց վրա եւ դուրս քշեցին քաղաքից, կորուստներ պատճառելով։

ՄԱԴՐԻԴ։ Լուրերին նայելով, այսօրվայ մինիստրական խորհուրդը չը նուազեցրեց երկիւղը մինիստրական ճգնաժամի մասին, որովհետեւ ժողովրդական լուսաւորութեան եւ հասարակական աշխատանքների մինիստրները կարծիք յայտնեցին Մադրիդում պաշարման դրութիւն մտցնելու դէմ։ Մինիստր նախագահը պէտք է երեկոյեան վատահութեան հարց ներկայացնէր թագուհի-խնամակալուհուն։

ՊՕՐՏՍՄՈՒԹ։ Արքայական զբօսանաւը հրաման ստացաւ պատրաստ լինել արքայական զոյգի ուղեւորութեան համար դէպի Գերմանիա եւ նոյնպէս, հաւանականօրէն, Դանիա։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Հիւանդութիւնների երկու դէպքում հաւաստված է ժանտախտային բացիլների ներկայութիւն. հաւաստված են 12 հիւանդացումներ ժանտախտից։

ՀՌՕՄ։ Մինիստրութեան ենթադրական կազմը. Ցանարդէլլի՝ մինիստր նախագահ, Ջիոլիտի՝ ներքին գործերի, Պրինէտտի՝ արտաքին գործերի, Կոննա-Օրտու՝ արդարադատութեան, Վիլլէմբէրգ՝ ֆինանսների, Դիբրօզիո՝ դանձապահութեան, Պոնցա-դի-Սան-Մարտինօ՝ զինուորական, Մօրին՝ ծովային, Նունցիո—Նաղի՝ ժողովրդական լուսաւորութեան, Ջուսսո հասարակական աշխատանքների, Պիկարի՝ երկրագործութեան եւ Գալլիբէրտի՝ պօստերի մինիստր։

ՊԵԿԻՆ։ Կայսրը դիմեց դեսպաններին խընդրելով համաձայնութիւն յայտնել, որ յանցաւոր չինացի պաշտօնեաները իրանք իրանց սպանեն։ Երբ պաշտօնեաներից երեքը հրաժարվեցին հպատակվել այդ վճռին, կայսրը ետ առաւ այդ խնդիրը։ Դրանից յետոյ կայսրը հեռագրեց Ցինին, որ երբ արքունիքը համաձայնեց յայտարարագրի պայմաններին, նրանով պահանջվում էր միայն այնպիսի պատիժ, որ համապատասխան լինէր չինացի աստիճանաւորների կատարած յանցանքներին. եթէ ամենագլխաւոր յանցաւորները արժանի էին մահվան պատժի, միւսները ենթարկվելու էին ուրիշ պատիժների։ Դեսպանները պատասխանեցին, թէ ամենաքիչ յանցաւորներն էլ արժանի են մահվան եւ բոլորն էլ պէտք է ենթարկվեն մահվան պատժի, որովհետեւ չը կայ աւելի ծանր պատիժ։

ԼՕՆԴՕՆ։ Հաւանքների ժողով։ Սպիկէր յայտնում է, թէ օտարազգի պարլամէնտներից ստացվել են ցաւակցութեան արտայայտութիւններ, որոնց նա պատասխանել է, շնորհակալութիւն յայտնելով։—Ֆեօրստէր պաշտպանում է ուղերձի ծրագիրը եւ յիշատակում է վշտի եւ ցաւակցութեան այն նշանակալից արտայայտութիւնները, որոնք տեղի ունեցան թագուհու մահվան առիթով։ Հռետորը շարունակում է. «Եթէ նոյն իսկ անհամաձայնութիւններ կարողանային ծագել Գերմանիայի եւ Անգլիայի մէջ, Անգլիան այնուամենայնիւ հեշտ չի ժոռանայ այն մասնակցութիւնը, որ գերմանական կայսրը ունեցաւ ազգային վշտի մէջ։ Կայսրը, այդ դիրքը բռնելով, ներշնչված է եղել անշուշտ անձնական եւ ոչ թէ քաղաքական շարժառիթներով, բայց Անգլիան այդ պատճառով աւելի նուազ չէ գնահատում նրա արտայայտած անձնական ցաւակցութիւնը։ Նրա ներկայութիւնը ուժգին կերպով ազդում է անգլիական ժողովրդի վրա, որ շուտ չի մոռանայ այդ բանը»։ Ճառի մնացած մասում հռետորը (ինչպէս եւ նրանից յետոյ խօսող Ա-

նիուն, որ նոյնպէս պաշտպանում է ուղերձի ծրագիրը) չշափում է հարաւ-ափրիկական պատերազմի շարունակութեան հարցը։ Այդ խօսքերը իրլանդացի նացիոնալիստները ընդունում են հեգնական բացականչութիւններով եւ առարկութիւններով մինչդեռ Դէվէտի անունը ողջունում են համակրութեան բուռն արտայայտութեամբ։

ԿԱՐԼՕՎԻՑ։ Պատրիարք Բրանկովիչ այսօր ճանապարհ ընկաւ Վիէննա, որպէս զի, աւստրիական կայսրի ցանկութեամբ, Միլանի թաղման կարգը կատարէ։ Պատրիարքը կուղեկցէ մարմինը մինչեւ Կրուշեդոլեան վանքը եւ այնտեղ եւս կը մասնակցէ եկեղեցական հանդէսներին։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Այսօր Զէմլին ոչ մէկ ճանապարհորդ չեկան Սերբիայից։ Ինչպէս այնտեղ լսւում է, ոստիկանութիւնը բռնում է նրանց բոլորին, որոնք Ունդարիա են գնում։

ՎԻԷՆՆԱ։ Երեկոյեան 10½ ժամին, հոգեհանգստից յետոյ, Միլանի մարմինը արքայական պատիւներով տարվեց սերբիական եկեղեցին։ Զորքերը երկկարգ կանգնած էին։ Դագաղի եռեւից գնում էին՝ սերբիական դեսպան Խրիստիչ, դեսպանութեան անդամները, Ալէքսանդր թագաւորի ադիւտանտը, սերբիական մի քանի նախկին մինիստրներ եւ աւստրիական կայսերական պալատի պաշտօնեաները։ Ամբողջ ճանապարհի վրա կանգնած էր ահագին ամբոխ։

ՊԷԿԻՆ։ Ուրիշ պետութիւնների նման, աւստրո-ունդարական կառավարութիւնը ապահովում է նոյնպէս իրան, ձեռք բերելով Տեանձինում բնակավայրեր այնտեղ հիւպատոսարան հաստատելու նպատակով աւստրիական հպատակներին եւ նրանց ձեռնարկութիւնները պաշտպանելու համար։ Պէկինի աւստրո-ունդարական դեսպանի հրամանագրով, Աւստրո-Ունդարիայի անունից զօրքերով գրաւվեց մի հողաբաժին Կայսերական ջրանցքի վրա, որի մասին աւստրո-ունդարական ծովային զօրաբաժնի հրամանատարը անմիջապէս գրաւոր տեղեկացրեց բոլոր հիւպատոսարաններին։ Գնի եւ կապալով զիջման կամ վաճառման պայմանների մասին բանակցութիւններ են սկսված։

ՊԱՐԻԶ։ Թեթեւ ջերմի պատճառով, Վալդէկ-Ռուսսո անհանգիստ դիշեր անցկացրեց, բայց նրա դրութիւնը ոչ մի դէպքում վտանգ չէ սպառնում։

ՊԱՐԻԶ։ Սենատում ընդունված է բիւդջէտը 1901 թի համար մի քանի փոփոխութիւններով. այդ պատճառով բիւդջէտը պէտք է վերադարձնվի պատգամաւորների ժողովը։

ՄԱԴՐԻԴ։ Աստուրեան պրինցուհու պսակադրութիւնը պրինց Կոզէրտայի հետ կատարեց Տոլէդոյի արքեպիսկոպոսը արքայական պալատի եկեղեցում. պրինցը հագած ունէր սպանական օֆիցերի համազգեստ։ Բոլոր հասարակական շինութիւնները այդ հանդէսի առիթով զարդարվեցին դրօշակներով։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի պալատ։ Ուղերձի քննութեան ժամանակ, Կիմբերլէյ ասում է, թէ հարաւային Ափրիկայում կառավարութեան գլխաւոր գործը կայանում է թշնամու դիմադրութիւնը խորտակելու մէջ։ Նա հաւատում է,—շարունակում է նա,—որ կառավարութիւնը վճռել է ձեռնարկել արմատական ուսումնասիրութիւն զինուորական սիստեմի։ Սօլսբիւրի պատասխանում է, թէ անիրաւացի կը լինի ենթադրել, թէ պատերազմի երկարաեւութիւնը ինչ որ մի արտասովոր բան է ներկայացնում. այնտեղ, ուր պարտիզանական կռիւ է մղվում, դիմադրութիւնը միշտ աջողվում է։ Ճառախօսը մատնացոյց է անում հարաւ-ափրիկական պատերազմի նմանութիւնը ամերիկական պարտիզանական պատերազմին, որի աջող վերջացման համար պէտք եղաւ չորս տարի։ Այս դէպքում հարցը այնպիսի մի երկրի մասին է, ուր դժուար է ճակատամարտ մղել եւ որ մեծ հնարաւորութիւններ է տալիս երկարատեւ դիմադրութեան համար։ Դեռ շատ ամիսներ կանցնեն, մինչեւ վերականգնվի կատարեալ անդորրութիւն։ Եթէ թշնամուն թողնվէր թէկուզ մի մասը նրա ունեցած անկախութեան, այդ առաջ կը բերէր անվերջ պատերազմ։ Ինչ զգացմունքներ են տիրում այդ կողմերում դա բոլորովին պարզ է։ Եթէ անգլիացիները չը մնան տէր եւ յաղթող, այլ եւս ոչ մի յոյս չի մնայ հաստատ խաղաղութեան, որով հետեւ թշնամին իրան թողնված ոյժի բոլոր մասերը գործ կը դնի նոր զինուորում նների եւ նոր յարձակումների վրա։ Անգլիացիների հրաժարումը վերջնական յաղթանակից համանիշ կը լինի բոլոր սահմանների եւ նոյն իսկ բոլոր դաղութների բացման արտաքուստ յարձակումների համար։ Կառավարչական քաղաքականութեան հակառակորդները, որոնք պաշտպանում են բօէրների անմիտ դիմադրութիւնը եւ անհիմն յոյսերը, կրում են իրանց վրա արիւնհեղութեան մեղքի մի մասը։ Պատասխանը վերջում ընդունեց ուղերձը։

3 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 2-ին արտասահմանից Պետերբուրգ ժամանեց Հէսսէնեան մեծ դուքսը իր աղջկայ, պրինցուհի Ելիսավետայի հետ։

ԲԱԳՈՒ։ Աստիճանաւորների եւ նաւթարդիւնաբերողների ներկայացուցիչներից կազմված ժամանակաւոր հրատարակեց Սպիտակ քաղաքի աղէտի հետազօտութեան արդիւնքը,—առ 31-ն յունվարի ցուցակագրված են 11 հազար եւ 7 երեխայ այրված, 7 հոգի այրվածքներից մեռած, 109 այրվածներ, որոնք բժշկվում են. հրկիզվել են 11 տուն. բանուորները եւ արհեստաւորները պահանջներ են յայտնել այրված կայքի պատճառով 105,000 բուբլու, խանութպանները եւ տանտէրերը՝ 154,000 բուբլու. 150 բուբլուց պակաս պահանջները բաւարարութիւն են ստանում եւ այդ գումարները ստացողները գնում են իրանց ծննդավայրերը. առաջին խումբը, 60 հոգուց, արդէն ճանապարհ դրվեց։ Պեղումները շարունակվում են։ Այրված չէնքերի թւում գտնվում են Կասպեան-Սեւծովեան ընկերութեան հնոցատունը, ջրմուղային բաժանմունքը եւ ուսումնարանը եւ «Ատլաս» գործարանի ցամաքանոցային ծածկերը։

ԼՕՆԴՕՆ։ Պահպանողական թերթերը դահեկան ճառը նպաստաւոր ոճով են քննադատում. «Daily News», ընդհակառակը, ասում է թէ ճառը անորոշ է, տպաւորութիւն չէ գործում եւ բաւարարութիւն չէ տալիս։

ԻՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Երեքշաբթի երեկոյեան մի բօէրական զօրեղ զօրաբաժին փորձ արեց քանդել ջրանցքը. բայց սաստիկ կուից յետոյ ստիպված եղաւ ետ քաշվել։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրները յարձակում գործեցին Ֆիլիպստաունի վրա, բայց ետ մղվեցին։

ԼՕՆԴՕՆ։ Կիպչէնէր հաղորդում է. «Մեր ձեռքում գտնվող Ֆիլիպստաունից դէպի հիւսիս բանակած մեր զօրքերը կուի բռնվեցին Դէվէտի զօրքերի հետ։ Դէվէտ անցաւ. Օրանժեան գետը Զանդրիֆտի մօտ, դիմելով դէպի արեւմուտք ցրէրի կողմը, որ գտնվում է Էրմէլից 25 մղոն դէպի հարաւ արեւելք։ Հաղորդում են, թէ թշնամու մի ուժեղ զօրաբաժին ետ է մղված դէպի Պիտրէնտիֆ. նրա փորձերը պատռել մեր զօրքերի շարքերը անաջող են անցել»։

ՄԱԴՐԻԴ։ Գրանադայում, Ալիկանտէյում եւ Բարցելոնայում խառնակութիւններ տեղի ունեցան։ Կաղէրտա կոմսի ընտանիքը ուղեւորվեց Ֆրանսիա։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօէրները, Դեվէտի հրամանատարութեամբ, երեք օր առաջ, մի քանի խմբերի բաժանված, անցան Օրանժեան գետը Զանդրիֆտի մօտ. Հէրցոգի զօրաբաժինը գընում է դէպի առաջ արեւմտեան ուղղութեամբ Կէնդարդի վրա, իսկ երկրի կենտրոնում Կրիտցէնգերի եւ Շէպէրի հրամանատարութեամբ գործող զօրաբաժինները ետ գնացին. առաջինը դրաւեց Մուրրէյսբուրգ. կարծիք կայ, թէ նրանք ուղում էն միանալ Դէվէտի հետ։

ՇԱՆԳՀԱՅ։ Գերմանական ընդհանուր հիւպատոսը յայտարարեց այն սահմանները, որ ունի Պեկինում գերմանական դեսպանատան գրաւած հողը, եւ աւելացրեց, որ այն պահանջները, որ կարող են լինել գերմանացիների կողմից այդ սահմաններում հողաբաժիններ ստանալու վերաբերմամբ, պէտք է յայտնվեն մինչեւ փետրվարի 12-ը։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտերի գործակալութիւնը», հերքելով Եօրկեան դուքսի առողջութեան վիճակի մասին տարածված աննպաստ լուրերը, հաղորդում է, թէ տկարութիւնը թեթեւ է։

ՍՕՖԻԱ։ Ռուսաց դեսպան Զինովիեվի, սուլթանի մօտ ունեցած վերջին ընդունելութեան ժամանակ, մակեդոնական կոմիտէների մասին յայտնած կարծիքները զօրեղ տպաւորութիւն գործեցին այստեղ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Գանձապահութեան ստատիստիկական դեղի շրջաբերականով, որ ուղղված է մաքսային պաշտօնեաներին, ռուսաց այն բանֆինադ-չաքարի համար, որ այսուհետեւ ներմուծվելու է Միացեալ-Նահանգները, հաստատվում է լրացուցիչ մաքս 0,692 դոլլար ամեն մի ցէնտներին։

ՊԵԿԻՆ։ Յայտարարվեց կայսերական հրովարտակը, որ հրատարակվել է Սինանֆուում յունվարի 16-ին։ Փիլիսոփայական առաջաբանից յետոյ, որ վերաբերում է Չինաստանի պատմական զարգացմանը Մանջուրների նուաճումից սկսած մինչեւ վերջին դեպքերը, հրովարտակը խօսում է բէֆորմների անհրաժեշտութեան մասին, որոնց դէմ են չինացի աստիճանաւորների պահպանողականութիւնը եւ չինական ազգային մեծամտութիւնը։ Այնուհետեւ կայսրը կոչ է ուղղում բոլոր փոխարքաներին եւ նահանգապետներին, որ նրանք երկու ամսի ընթացքում ծրագիրներ ներկայացնեն հարկերի որոշման, երկրի պաշտպանութեան եւ ժողովրդական լուսաւորութեան մասին.

ՍՏԱՆԴԷՐՏՕՆ։ Վալի եւ Գրէյչինգչատգի մէջ բօէրները օդը պայթեցին բանուորական մի գնացք։ Նրան հետեւող սպառազէն գնացքը կրակ բաց արեց. սպանված են երկու բօէր։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Գեներալ Սմիտ Դորրիէն գրաւեց Ամատերդամը,

ԿՕԼՍԲԷՐԳ։ Բօէրները անցան Օրանժեան գետը Զանդրիֆտի մօտ եւ ընդարձակ դերք քանեցին Ֆիլիպստաունի ուղղութեամբ։—Գաղութային զօրքից 200 հոգի չորեքշաբթի հանդիպեցին 1,500 բօէրների. նրանք դիմացան մինչեւ որ օգնութեան հասան Պլումէրի հրամանատարութեամբ։ Թշնամին, որ սկզբում գանդաղ էր ետ մղվում, երէկ կատարելապէս նահանջում էր դէպի արեւելք, հալածվելով Պլումէրից։

ԿՐԱԴՕԿ։ 50 բօէրներից բաղկացած մի խումբ երէկ այստեղից տաս մղոն հեռու խլեց 70 ձիուց կազմված տրանսպորտը, որ ուղարկվում էր անգլիական զօրքերին։

ԲԵՐԼԻՆ։ Ռէյխստագը ընդունեց երրորդ ընթերցմամբ զեկուցումը չինական գործերի մասին։ Բէբէլ (սոցիալիստ) նորից կրկնեց իր յարձակումները պատերազմը վարելու ձեւի վրա։ Զինուորական մինիստրը յայտնեց, թէ Բէբէլի ցուցմունքները անապացոյց են։

ՊՕՐՏ-ԷԼԻՍԱԲԵԹ։ Մասնաւոր նամակների լուրերին նայելով, բօէրները Էդինբուրգի մօտ չորս անգամ օղն են թոցրել գնացքներ. վերջին անգամ նրանցից սպանվեցին 12 հոգի անգլիական սպառազէն գնացքի հրաձգութիւնից։

ՎԻԷՆՆԱ։ Բազմաթիւ ժամանակիցներով եւ կայսրի, մի քանի էրցհէրցոգների, դիւանագիտական մարմնի, սերբիական դեսպանութեան, մինիստրների, պալատականների, պետական բարձրաստիճան պաշտօնեաների, սերբիական թագաւորի ներկայացուցչի եւ բումինական թագաւորի ներկայացուցչի ներկայութեամբ Միլանի դագաղի վրա հանդիսաւոր ծէսով հոգեհանգիստ կատարվեց սերբիական յունադաւան եկեղեցում։ Ցուղարկաւորութեան կարգը կատարեց Բրանկովիչ պատրիարքը. յետոյ կայսրը, էրցհէրցոգները եւ միւս ներկայ եղողները ճանապարհի մի մասը գնացին վեց ձի լծած սգակիր կառքի ետեւից, իսկ այնուհետեւ կանգ առան եւ ճանապարհ տուին յուղարկաւորութեան, որ առաջ էր գնում դէպի երկաթուղու կայարանը երկկարգ զօրքերի արանքով. կայարանում դագաղը դրեցին վագոնի մէջ եւ գնացքը ուղեւորվեց Կարլովից, որպէս զի թաղումը կատարեն Կրուշեդոլում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրը, համաձայնութիւն կայացնելով արտաքին գործերի մինիստրի հետ, որոշեց բարձրացնել մաքսերը Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների արդիւնագործութեան արտադրութիւններից. այդ որոշումը պէտք է սկսի գործադրվել յայտարարվելու օրից երկու շաբաթ անցած.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմանւում է
Զօլաի «ՓՈՂ» (Деньги) վէպը։
4—1 Հ. Մելքումեանց

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ի ՊԱՏԻՒ «ՊԵՊՕ»-Ի 30-ԱՄԵԱԿ
Կիրակի, փետրվարի 4-ին
Տ. Վ. ՄԵԼԻՔԵԱՆ
բարեհաճ մասնակցութեամբ պ.պ. Ա. Մանդինեանի, Ց. Զմշկեանի եւ հայ դերասանակ. ընկ. կը ներկայացնէ
I
ՊԷՊՕ
Կօմ. 8 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի
Մասնակցում են տ. Մելիքեան, օր.օր. Վ. գուշի, Ցասմիկ, պ.պ. Տէր-Դաւթեան, Մ. դինեան, Զմշկեան, Ցարութիւնեան, Միրզ. յեան, Ցակոբջանեան։
II
ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ
Վոդեվիլ 1 գործող. թարգման. Դ. Տ. Դ.
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան։
Ժողովարանի ոչ անդամները մուտքի համ. առանձին չեն վճարում։
Տոմսակները վաճառվում են ժողովարա. չվէյցարի մօտ։ 2—3

փետրվարի 8-ին
ԾԱԽՎՈՒՄ Է
Աճուրդով եւ ձեռնտու պայմաններով Թիֆլ. Նահանգական վարչութեան մէջ Անդրօնիկ. երեքյարկանի, լաւ եկամուտ բերող
ՏՈՒՆ Ը,
որ գտնվում է Թիֆլիս քաղաքում, Կուկիա. 9-րորդ քաղաքամասում, Ելիսավէտինսկայա. կիրօշնայա փողոցների անկիւնում։ Պայմ. ների մասին կարելի է տեղեկանալ տանտի. ջից եւ աճուրդի ժամանակ։ 1—3

Ներկայ 1901 թի փետրվարի 18-ին, ցեր. վայ ժամի 11-ին, կայանալու է ԱՃՈՒՐԴ Տ. փի-թաղի (Քամոյենց) ս. Գէորգ եկեղեցու գ. թում նրա Դվորցօվայա փողոցի անկիւն. գտնվող երկու կրպակը վարձով տալու համ. ներկայ տարվայ մարտի 1-ից։
Պայմանաթուղթը նախապէս կարելի է ա. նել եկեղեցու երեցփոխի մօտ ամեն օր ժ. 4—6-ին. իսկ 18-ին մինչեւ աճուրդի սկ. նոյն գաւթում։ 1—3

ՀՐԱՒԷՐ
Հալաբարի ս. Կարապետ եկեղեցու նոր հաստատ. երեցփոխ պ. Արտաշէս Միքայէլ. Տէրտէրեանցի հրաժարական տալու պատ. ռով՝ փետրվարի 4-ին, կիրակի օրը, ս. պատ. րագից յետոյ, ժամը ուղիղ 10-ին, լինելու. երկրորդ եւ վերջին ժողով՝ նոր երեցփոխ ընտ. րելու, ուստի պատիւ ունեմ սրանով հրաւի. պ.պ. ծխականներին՝ ներկայ լինել յիշեալ կ. զեցումը ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝
3—3 Գրիգոր աւագ ք. Մանդակոնի

„ՄՈՒՐՃ" ԱՄՍԱԳՐԻ
1889, 1890, 1891, 1892, 1893 թ. ամ. տարիները կարելի է ձեռք բերել 50—80% զեղչումով։
Դիմել—Վիլեամինսկայա № 24, գրասենյ. Ա. Զարդարեանցի եւ Փ. Վարդազարեանի։
(չ. շ.) 3—20

Տալիս եմ մասնաւոր դասեր
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ
Հասցէս՝ Тройцкая улица, домъ № 11. Мелкумова.

Վաճառվում է արտասահմանեան եւ տեղ. ական
ԲՕԺՇԿԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻ
զանազան տեսակի եւ յայտնի ֆիրմա. ի ՍԵՐՄ, կովկասեան շերամապահական. յարանի սպիտակ փաթեթներով։ Ցանկացող. ը վաղօրոք պիտի դիմեն. Тифлисъ, Гал. Галустьяну. 7—1

Շաբաթ, 1901 թ. փետրվարի 10-ին
«ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ» շինութեան մէջ տեղի է ունենալու
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԴՕՄԻՆՕ"
Զրի եւ էժանագին ճաշարանի դրամական միջոցները աւելացնելու նպատակով
Տիկիններին խնդրում են լինել դիմակով եւ վարդագոյն դօմինոյով։ Այն տիկիններին, որոնք չեն ցանկանայ դիմակներով լինել, վճարելու են 50 կոպէկ տուգանք։
Սկիզբը 10 ժամին։
Տոմսակի գինն է 2 բուբլի 10 կոպէկ։
(կիր. երեք. հինդ. շաբ.) 1—4

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Февраля 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27